

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋԸ

ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

Հայ մշակույթի գործիչներին մշտապես հետաքրքրել է մեծ երախտավորի՝ Մեսրոպ Մաշտոցի անձը, նրա գործը, նաև անվան ստուգաբանությունը: Մաշտոցի անվան ստուգաբանությանը անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ, որոնք արտահայտել են խիստ իրարամերժ կարծիքներ: Մատենագիրները, երկու տարրեր անուններ են տալիս՝ Մեսրոպ և Մաշտոց (Մաշթոց, Մաժդոց, Մաշդոց): Գրերի գյուտի հեղինակի անվան ստուգաբանության պատմությունը ամփոփ ներկայացված է Հ. Աճառյանի «Հայոց գրերը» գրքում¹: Ոմանք ենթադրել են, թե իսկական անունը Մեսրոպ է, իսկ Մաշտոց (Մաշթոց) մականունն է (Մեսրոպ երեց)²: Ոմանք էլ Մաշտոց ձևը համարում են անուն, իսկ Մեսրոպ՝ մականուն: Ա. Գարագաշյանը կարծում է, որ Մեսրոպը աշխարհիկ անուն է, իսկ Մաշտոցը՝ եկեղեցական տիտղոս: Ս. վարդապետ Պարոնյանը՝ Մեսրոպը համարելով ասորերեն բառ, կարծում է, թե այս տիտղոսը Մաշտոցին տրված պիտի լինի Ասորիք կատարած ուղևորության ժամանակ, Նոբսիայի Բաբելաս եպիսկոպոսից, երբ Մեսրոպը, դառնալով Սամոսատից, կարողացել էր գտնել հայերեն նշանագրերը և ներկայացնել վերջինիս: Մ. Օրմանյանը Մաշթոց համարում է աշխարհիկ անուն, իսկ Մեսրոպ (այն է՝ տե՛ր Մեսրոպե)՝ անունը՝ ստացած ձեռնադրության ժամանակ: Գ. Նահապետյանը, ընդունելով Մաշտոցը որպես հին անուն, Մեսրոպ անունը տրված է համարում Հունաստանում Ատտիկոս պատրիարքի կողմից՝ էկլեզիաստիկոս ձեռնադրվելու ժամանակ: Ա. Գարագաշյանը Մաշտոց անունը մեկնում է հունարեն *Mastōs* բառից, որ նշանակում է «բարձրություն»: Այս ստուգաբանությունը ընդունում է Ծ. Թովմյանը: Ս. վարդապետ Պարոնյանը այն բացատրում է որպես ծիսաբանի անուն, որից այն անցել է հեղինակին: Ըստ Պարոնյանի, զենդերեն մազդ «զոհ», «երգ» բառն է կամ եբրայերեն մաշժոռ «աղոթագիրք»: Մ. Ավգերյանը առաջին և սովորական անունը համարում է Մաշտոց կամ Մաշթոց, իսկ Մեսրոպ ստուգաբանում է որպես բաբուն կամ Մշու բաբբի: Գ. Յնտզլյանը Մաշտոց անունը կապում է իրանյան *Mazdak*՝ անվան հետ, արմատը՝ մաշտ > *Mazd*, ոց վերջավորությունը գտնում է Բաբալ-Բաբոց, Տիրիկ-Տիրոց և Աիրիկ-Ափոց անունների մեջ: Ն. Ադոնցը, մերժելով *Mazd* > մաժդ ձևերի համեմատությունը, Մաշտոց բառը նույնացնում է Քսերքսեսի զորավարներից մեկի անվան հետ:

Ղ. Ալիշանը Մաշտոց բառը ստուգաբանում է մաշտ արմատից, որ «սրբազան նշանակություն մը պիտի ունենա, թերևս համանիշ մշտիկ բառին, որ նշանակե օրհնյալ ջրոց ցանիչ գործին կամ ճյուղը»: Միաբանը (Գալուստ Տեր-Մկրտչյան) մաշտել բայի հետ է կապում՝ «մազերը քերելու, պոկելու գործիք, մազխիլ»: Նույն կերպ է մեկնում նաև Գ. Խալաթյանը: Հ. Աճառյանը համամիտ է Ն. Ադոնցին այն հարցում, որ հին ձևը Մաժդոց-ն է, ինչպես գործածվում է Պրոկղի թղթում, որից և առաջանում է Մաշտոց ձևը: Հ. Աճառյանը վկայակոչում է Յո. Մարկվարտին, որը միշտ Մաշթոց է գործածում, սակայն գտնում է, որ Պրոկղի վրա հիմնվելը ևս կասկածելի է, որովհետև այն մեզ հասել է հետին արտագրությամբ³:

1 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 108—111:

2 Այս և մյուս մեկնությունները տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 311:

Գ. Զահուկյանը Մաշտոց բառը քննարկում է թրակերեն անձնանունների զուգադիպումների մեջ, բայց և տողատակում վերապահում է կատարում. «Սա-կայն հայ. բառը ամենայն հավանականությամբ իրանական ծագում ունի»⁴։

Ն. Ակինյանը ես արմատը համարում է մագդ կամ մաժդ՝ հենվելով Թ.-նյուդեբեի վրա, ըստ որի ժդ-ն վերածվում է շդ, շա-ի (ինչպես ռիժդ, ռիշդ, ռիշա)⁵։

Ա. Մարտիրոսյանը Մաշտոց անունը կապում է տոհմի քրմապետական շրջանում եղած նախասիրության հետ, երբ հայերը, քրիստոնեություն ընդունելուց հետո, քրմերի որդիներին տվեցին եկեղեցական ծառայության։ Սակայն հեղինակը գտնում է, որ դա պարզ վարկած է։ Մեկ այլ առիթով նա նշում է, որ «Մաշտոց անունը... հետագայում իր անսովոր բնույթի պատճառով վերասերվել է Մեսրոպ»⁶։

Այսպիսով, մեր մատենագրության մեջ Մաշտոց անունը ստուգաբանվում է ոչ միանշանակ, ընդ որում՝ հեղինակների մեծ մասը (մենք ներկայացրեցինք հեղինակների ոչ լրիվ ցանկը) հիշյալ անվանը վերագրում է օտար՝ երբայկան, ասորական, հունական, իրանական (պարսկական, զենդական) ծագում, մի փոքր մասը միայն՝ հայկական։

Իմաստային առումով ևս հեղինակները տարակարծիք են։ Այն բացատրում են մեկ որպես աշխարհիկ անուն, մեկ՝ հոգևոր կոչում կամ էլ բխեցնում են զինվորական իմաստից, կամ նույնիսկ՝ կարծեցյալ ճաղատությունից։

Մաշտոց բառի ստուգաբանության մեջ պարզություն մտցնելու համար փորձենք բացահայտել հեղինակի ծննդավայրի՝ Տարոնի, հավանական կապերը Հայաստանի մյուս գավառների հետ, Մաշտոցի կյանքի ու գործունեության մի քանի դրվագներ։

Տարոնը ընկած է Բզնունյաց ժովից փոքր-ինչ հյուսիս-արևմուտք, հարավից սահմանակից լինելով Մամիկոնյանների նախարարության մյուս գավառին՝ Սանասունքին։ Հիշենք, որ Մամիկոնյանների նախարարությանն էր պատկանում Հայաստանի հյուսիս-արևմուտքի Տայք նահանգը, որը հյուսիսից սահմանակից էր Ժանքին։ Տարոնի և Տայքի միջև է ընկնում Օրդունիքը կամ Բասենը։ Փավստոս Բուզանդի վկայությամբ կար Օրդորու գյուղ, որը խոսքով թագավորը տվել էր Բասենի եպիսկոպոսին այն բանից հետո, երբ թագավորի հրամանով Մամիկոնյան Վաչե զորավարը կոտորում է Մանավազյաններին և Օրդունիներին⁷։

Մեսրոպ Մաշտոցը բնակվել է Մամիկոնյաններին պատկանող տարածքում։ Հ. Աճառյանը նրան այդ տոհմից է սերված համարում։ Բայց սա չէ, որ հետաքրքրում է մեզ, այլ այն, որ Հացեկաց գյուղը տնտեսական, լեզվական մշակութային կապերով շփվում էր այս նախարարական տան հետ։ Այս առումով կարևոր է պարզել այն հարցը, թե արդյո՞ք հայոց հին գրական լեզուն համահավասար գործածական էր հայ ժողովրդի բոլոր հատվածների համար։ Կորյունը հիշատակում է բարբառների առկայությունը։ «Այն ժամանակ թագավորից շուտով հրաման առավ՝ սկսելու (սովորեցնել) Մարաց խուժադուժ կողմերը, որոնք դժվար մատչելի էին ոչ միայն իրենց դիվական, սատանայակիր, ճիվաղական բարքի, այլև խեցեկազույն և կռճառ կռճաղի պատճառով» (ընդգծումը մերն է—Գ. Ս.)⁸։ Անշուշտ, հեղինակը նկատի ունի ոչ թե գրաբարը, այլ բարբառները, այլապես Մաշտոցը և նրա աշակերտները չէին զբաղվի «շատ տարիների ծնունդների կոկեղու» խնդրով։ Կարծում ենք, Մաշ-

4 Գ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 74։

5 Ա. Մարտիրոսյան, Մաշտոց (պատմա-քննական տեսություն), Երևան, 1982, էջ 146։

6 Տե՛ս նույն տեղում։

7 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1947, էջ 90։

8 Կորյուն, Վարք Մաշտոցի, Աշխարհբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյան, Երևան, 1962, 7։

տոցի աշակերտներին նկատի ունեն հեղինակը, երբ ասում էր «դարձրին (նրանց) պարզախոս, հոնտորաբան, կրթված, աստվածատուր իմաստությունը ծանոթ»⁹:

Կորյունը գործածել է «խեցքեկագույն» բառը ոչ թե որպես խեցքեկ «կըցկտուր», «ծովաված», «կոտրված» ածականի դրական աստիճան, այլ դրա համեմատականը, հետևաբար եղել են այնպիսիք, որոնց համեմատությամբ այս լեզուն շատ ավելի «ծովաված» է եղել: «Վարքի» հեղինակը տարբերակել է բարբառները, ուրեմն՝ դրանց առկայությունը նախամեսրոպյան շրջանում անառարկելի է:

Գ. Զահուկյանը ենթադրում է, որ «հայերենի հնդեվրոպական ընդհանրությունից առանձնանալու ժամանակ պետք է արդեն գոյություն ունենային բարբառների մասնակի տարբերություններ և որ հայ ժողովրդի բոլոր հատվածների լեզուն հենց սկզբից էլ չէր կարող լիովին նույնական լինել» և չի բացառում բարբառներում այդ կարգի որոշ տարբերությունների պահպանվելու, նույնիսկ գրական հուշարձաններում մուտք գործելու հանգամանք¹⁰: Ի վերջո Գ. Զահուկյանն այն համոզմունքն է հայտնում, թե «արդի բարբառների հնչյունական և ձևաբանական խմբերը սկսում են զծագրվել հին շրջանի վերջերից և միջին շրջանի սկզբներից»¹¹: Անտարակուսելի է, որ հնագույններից են Համշենի, Օրդունիքի, Տրապիզոնի բարբառները, որոնք ժամանակին որպես Համշենի բարբառ ուսումնասիրել են Հ. Աճառյանը¹², Ա. Ղարիբյանը¹³, ուսումնասիրել և բարբառների համակարգում գիտական դասակարգման է ենթարկել Գ. Զահուկյանը¹⁴: Բարբառային հատկանիշները նա վերցրել է համաժամանակյա և ստատիկ կտրվածքով: Որպես բարբառային հատկանիշների համեմատության եզր ծառայել են գրաբարը, արևելահայ ու արևմտահայ լեզուները: Նկատվում են բարբառային հատկանիշներ, որոնք լիովին բացահայտման ենթակա չեն միայն գրաբարի հետ համեմատվելու միջոցով¹⁵: Գ. Զահուկյանը բարբառների աղյուսակում ընդգրկում է հայտնի բոլոր բարբառները: 120 բարբառային միավորներից արևմտահայ բարբառախոս վայրեր են 1—72-ը: «Ընդ որում՝ 1—12-ը այն վայրերը, որոնց բարբառային կենտրոնները տեղավորված են Եվրոպայում և Արևմտյան Փոքր Ասիայում, 13—40-ը՝ պատմական Մեծ Հայքի արևմտյան և հարավ-արևմտյան հարակից շրջաններում, այդ թվում՝ պատմական Փոքր Հայքում, Կիլիկիայում, Սիրիայում, 41—72-ը՝ պատմական Մեծ Հայքի արևմտյան և հարավ-արևմտյան շրջաններում»¹⁶:

Բարբառների դասակարգման հատկանիշներից մեզ հետաքրքրում է r -ի քմայնացածությունը, դրա հետ կապված փոփոխություններով հանդերձ ($r > r'$, j , δ , σ , γ): Այս հնչյունափոխությանը ենթակա են արևմտահայ մի շարք բարբառներ՝ Չալթրը, Մարդվան, Ամասիայի, Զիֆանոս (Տրապիզոն) [Համշենի], Մալա [Համշենի], Մարթիլ (Զանիկ) [Համշենի], Սեբաստիայի, Արաբկիրի, Զեյթունի, Հաճընի (Կիլիկիայի) և այլ բարբառներ, որոնց թիվն անցնում է քսանից¹⁷: Համշենի են համարվում Մարթիլ, Մալա և Զիֆանոս բարբառները, Օրդունի, Տրապիզոնի և այլ վեց բարբառներ՝ Պոլսի միջբարբառ, հայ բարբառների տարածման քարտեզում՝ Համշենի կամ հյուսիս-արևմտյան միջնախումբ (IV խումբ)¹⁸: Այդ բարբառներով խոսող մեր ժողովրդի մի ստվար հատված բռնազաղթի հետևանքով այժմ սփռված է Սև ծովի արևելյան ափին՝ Օ-

9 Տե՛ս նույն տեղում:

10 Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 161:

11 Նույն տեղում, էջ 192:

12 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947:

13 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:

14 Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 40:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 62:

17 Տե՛ս նույն տեղում, աղյուսակ 2, էջ 51:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 134:

Համշիբից մինչև Տուապս, Մայկոպ, Արդի Համշենի և Նոր Նախիջևանի բարրառենքում գործող օրենքները մեզ թույլ են տալիս Մաշաոց անվան նոր մեկնություն հատարել:

Համշենի բարբառի բոլոր խոսվածքներում, Տրապիզոնի, ինչպես նաև Նոր Նախիջևանի (Լրիմի) բարբառներում նկատելի է մեկ ընդհանուր օրենք՝ բաղաձայնը ատամնային չ, ք հնչյուններից առաջ հնչյունափոխվում է շ-ի (շտ, շլ): Այսպես, Համշենի բարբառով օրինակներ՝ մարդ>մաշտ, մորթել>մօշտուշ, կարդալ>գաշթուշ, էրթալ>էշտուշ, խորթ>խէօշտ>խէօշթ, երդնուլ>էշտվըննուշ, երդումն>էշտվումն, քերթել>քեշտուշ, հորթ>հէօշտ¹⁹, թորթ>թէօշտ (խոտաբույս) և այլն: Նոր Նախիջևանի (Լրիմի) բարբառով օրինակներ՝ արդար>աշթար, բուրդ>բուշտ, բրդել>փշտել, երդումն>էշտուս, լյարդ>լեշտ, կարդալ>գաշաւ>կաշտալ, մարդ>մաշտ>մաշթ²⁰:

Մարդ բառը երկու բարբառներում էլ ունի մաշտ>մաշթ ձևերը: Գործածական է մաշտնագ>մաշնագ-ը՝ «լավ», «մարդավարի» իմաստով: Նոր Նախիջևանի բարբառը՝ նաև ածանցով կազմում է սայենագ>հայնագ «հայերեն», սյսպսսագ ձևերը: Աճառյանը բերում է նաև սառդնակ գործածությունը²¹:

Համշենի բարբառում գործածական են էրիգսաշտ, գնիգմաշա, մաշտկուլ: յուս, անմաշտ, մաշտավարի, մաշա գովազով «մարդ կուլ տվող», մաշաու ՎԿԱՆՆ «մարդու տալ», «ամուսնացնել»: Նոր Նախիջևանի բարբառում գործածական են Լրիմաշտ, էրմաշտ, գինսաշտ, գինմաշթ, գինիսաշտ «կնիկմարդ» բառերը: Այստեղ գործում է ձայննդ և խուլ բաղաձայն հնչյունների տեղաշարժ-տեղափոխության հայտնի օրենքը՝ ձայննդը վերածվում է խուլ հնչյունի: Դրա արտահայտությունն է սառդ>սաշտ ձևը: Տրապիզոնի բարբառի խոսվածքներում իշխում է մաշթ գործածությունը²²: Որպես կանոն շշակա բաղաձայններից հետո վերագրյալ բարբառներում Բդ, Բթ-ն չեն դառնում շշ, շթ, այլ վերածվում են յտ, յթ-ի, ինչպես՝ ջարդել>ճաթթուշ, սարդ>զաթթ, ծառղարդար>զառզաշտար, Զարդար>Ջաթթար, զարթուն>զաշտուն, զայթուն, զարթնել>զաթթուշ: Մի շարք բառեր, որոնք չեն ենթարկվում այս օրենքին, փոխառություններ են՝ կապված հատկապես կրոնական հասկացությունների և ծեսների հետ՝ արդար>արթար, մկրտել>մըգրդուշ, օրհնել>օրթնուշ, վարդապետ>վարթարեդ²³: Այս ցանկը կարելի է ավելացնել վարդ>վարթ, բերդ>պերթ>պերտ, ժողովուրդ, խորհուրդ, ռուսերենից փոխառված սորտ>սորթ, խորքերենից փոխառված մարդակ>մորդուդ «գերաս» բառերով: Այս բառերի շինչունափոխվելու հանգամանքը վկայում է Բ-շ հնչյունափոխության հնությունը: Չեն հնչյունափոխվում քրիստոնեական կրոնի հասկացություններ արտահայտող բառերը, որոնք ժամանակային առումով նախորդում են գրերի գոտին, էլ չեն խոսում թուրքական կամ ժամանակակից գրական հայերենից ու ռուսերենից փոխառված ձևերի մասին: Հետևաբար, այս հնչյունափոխությունը գործել է մինչքրիստոնեական շրջանում և հետագայում դադարել է գործելուց: Մեծ հայագետ Աճառյանին անգամ զարմացրել է Համշենի բարբառում գրաբարյան հազվագյուտ բառերի հարստությունը, որ «ոչ մի բարբառի մեջ կարելի չէ գտնել»: Բարբառի կատարելության վկայությունն են նաև ճրնտիբ նորակերտ բառերը²⁴:

19 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 65:

20 Հ. Աճառյան, Քննություն Նոր Նախիջևանի (Լրիմի) բարբառի, Երևան, 1925, էջ 151:

21 Տճ՝ս Հ. Աճառյանի վերոհիշյալ աշխատությունները Համշենի և Նոր Նախիջևանի բարբառների վերաբերյալ (համապատասխանաբար՝ էջ 28 և 73, 121), նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 280:

22 Տճ՝ս Նախարար Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, Երևան, 1986, էջ 127, 163, 170, 182, 196, 201: Առավելապես վկայակոչված են առածներն ու ասացվածքները:

23 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 66:

24 Նույն տեղում, էջ 12:

Այսպիսով, խնդրո առարկա բարբառների բառային կառուցվածքն է, որ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այդ ուղղությամբ գոյություն են ունեցել հայոց հին գրական լեզվի (գրաբարի) հինհայերենյան դարաշրջանում, նույնիսկ՝ մինչմեսրոպյան շրջանում: Այդ են վկայում գրաբարյան բառաշարերը, դրանց բառակազմության, հնչյունափոխության օրենքները: Մեզ հետաքրքրող բառարմատը այս բարբառներում ունի իր հումանիզմները՝ մարդ>մաշտ, ալր>ալնձ>օնձ, որոնք բառակազմական ակտիվ դեր են կատարում:

Մարդ>մաշտ բառով, ի թիվս այլ կազմությունների, եղել է և այժմ գործածական է մաշտնագ>մաշնագ բառը, որում տ-ի անկումը տանում է դեպի բառիմաստի մթազնում: Մաշտ արմատին միացել է -ոց ածանցը և կառմել մաշտոց: -ոց ածանցը հնդեվրոպական է, հնարավոր է, որ հնում ունեցել է նաև անձ նշանակող արժեք²⁵: Մենք ունենք Ափիկ-Ափոց, Բաբակ-Բաբոց, Տիրիկ-Տիրոց ձևերը, որոնք կազմված են -ոց ածանցով: Համընթի բարբառում ևս -ոց ածանցն ունի բառակազմական դեր²⁶: Բ-ը հնչյունափոխությունը հնում դիտվել է իբրև բարբառային, և, բնականաբար, գրավոր աղբյուրներում հրնչյունափոխված բառերը տեղ չեն գտել: Մատենագիտության մեջ նման գործածություն միայն եղակի դեպքեր կան՝ լերկ>լեշկ>լեաշկ>լաշկ «անմազ», «մերի», «հարթ», «ողորկ», որից կազմված են նաև լեշկամաշկ, լեշկիմ ձևերը՝ գործածված V դարի մատենագրության մեջ²⁷:

Մենք փորձեցինք պարզել Մաշտոցի քաղաքային որոշ վայրերում բնակված «արաբախու» տոհմերի. ցեղախմբերի հետագա ճակատագրերը, մի խոսքով՝ կապեր գտնել մեր ժողովրդի արդի որոշ հատվածների և IV—V դդ. նրանց հավանական նախորդների միջև:

«Վարք»-ի հեղինակը նշում է, որ Մաշտոցը թագավորից հրաման ստացավ՝ «սկսելու (սովորեցնել) Մարաց խուժադուժ կողմերը», որոնք «դժվար մատչելի էին», նաև «խեցքեկագույն և կոշտ ու կոպիտ լեղվի պատճառով»: Այս բնակավայրի ժողովրդին դարձրեց «պարզախոս, հոռոտորաբան, կրթված, աստվածատուր իմաստությանը ծանոթ»: Դա, անշուշտ, դժվարին և տնական աշխատանք պետք է եղած լինի և, ամենայն հավանականությամբ, Մաշտոցից ու նրա աշակերտներից քիչ եռանդ ու ուժ չի պահանջել: Ենթադրում ենք, որ Մարաց կողմերում նա ավելի երկար է մնացել, քան այլուր, որովհետև հիշյալ վայրի բնակիչները «դժվար մատչելի էին», նաև «իրենց դիվական, սատանայակիր, ճիվաղական բարքի» պատճառով: Կարելի է ենթադրել, որ նրանց բարքերը, որոնց բնութագրման համար Կորյունը մակդիրներ չի խնայել, լորջորեն խոչընդոտել են քաղաքի գործունեությունը: Այնուամենայնիվ, Մաշտոցը հրամանը կատարել է, նրանց կրթելու և դավանափոխելու գործը հաջողությամբ է պսակել: «Եվ այնպես հանգամանորեն խորամուխ եղան նրանք օրենքների ու պատգամների մեջ, որ մինչև անգամ բոլորովին դուրս եկան իրենց ազգակցությունից»²⁸:

Մ. Արեղյանը Մարք, Կողմանք Մարաց է համարում Հայաստանի Վասպուրական նահանգի մասը կազմող Պարսպատունիք և Մարանդ գավառները²⁹: Ա. Աբրահամյանը դրանք որոշակիորեն դեպի հյուսիս-արևմուտք է տեղադրածում՝ «Մասիս լեռան հյուսիս-արևելյան կողմից սկսած Երասխ գետի երկու կողմերը, Շարուրի դաշտից մինչև Խրամ, Զուղա»³⁰: Պարսպատունիքն ու Մարանդը սահմանակից են Ամատունիքին, որի տարածքն, ըստ Ա. Աբրահամյանի, համընկնում է Կորյունի հիշատակած Մարաց կողմերին: Մենք համամիտ

²⁵ Այս միտքը բանավոր զրույցի ժամանակ մեզ տվել է ակադեմիկոս Գ. Զահուկյանը:

²⁶ Զ. Ա. Տառյան, Քննություն Համընթի բարբառի, էջ 183:

²⁷ Տե՛ս Վեր բառգիրք Հայկազան լեզուի, հ. 1, Երևան, 1979, էջ 183, 184:

²⁸ Կորյուն, Վարք Մաշտոցի, 7:

²⁹ Տե՛ս նույն տեղում, ծանոթ. 55:

³⁰ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1964, էջ 413:

ևնր Ա. Աբրահամյանի տեսակետին և համոզված ենք, որ հետազայում Ղևոնդ պատմիչի հիշատակած արտագաղթը վերաբերում է Մառաց կողմերի բնակիչներին: Հարուն ալ Ռաշիդի խալիֆայության շրջանում, 789 թ., արաբական լծից խույս տալով, շուրջ տասներկու հազար հայ գյուղացիներ Ամատունյաց տոհմից Շապուհի և նրա որդու՝ Համամի, Հայաստանի այլ իշխանների ու հեծյալների առաջնորդությամբ, մարտեր մղելով հետապնդող թշնամու դեմ, անցնում են Ակամասիս (Ճորոխ) գետը, Եգերաց երկիրը և մտնում Բյուզանդիայի տիրապետության սահմաններում գտնվող հաղտիք երկրամասը: Կոստանդին արքան պատիվներ է շնորհում իշխաններին և մնացյալ խառնիճաղանջ ժողովրդին՝ բնակեցնում բարվոք ու արգավանդ երկրում³¹: Նրանց բնակավայրը կոչվեց Համամշեն, իսկ իրենք՝ համշենցիներ: Համշենի լեռնաշխարհը հետագա դարերում պատսպարել է արտագաղթած նորանոր խմբերի: Համշենցիներին հետագայում ևս վիճակված էր բռնագաղթի ենթարկվել, այս անգամ թուրքական բռնակալության հայաշինը քաղաքականության հետևանքով: XIX դ. վերջին քառորդում, զանգվածային կոտորածների սպառնալիքի տակ, համշենցիների մի ստվար հատված անցավ Կովկաս և բնակություն հաստատեց Սև ծովի առափնյա շրջաններում՝ իր հետ տանելով համանի բարքերը, լեզուն:

Այսպիսով, հիմք ընդունելով Կորյունի «Վարքը», կարծում ենք, որ քառորդային շրջանում Մաշտոցի և Մարքի բնակիչների միջև պետք է որ սերտ բարեկամական հարաբերություն հաստատված լինի: Դրա արտահայտությունը կարող էր լինել մաշտ>մառդ անվան պարզեումը ուսուցչին, քարոզչին, որպես սիրո, հարգանքի, երախտագիտության տուրք: Այս կապակցությամբ ավելորդ չէ մեջբերել Շնորհալու կողմից մառդ բառի մեկնությունը՝ «Մարդ անուն է, որ է իմաստուն»³²: Պատահական չէ, որ Ամատունիներից Վահան. իշխանը Մաշտոցի դին էջմիածնից տեղափոխում է Օշական և նրա գեղեղմանի վրա կառուցում կենտրոնագմբեթ եկեղեցի-դամբարան:

Ակադեմիկոս Լ. հաշիկյանը, հիմք ընդունելով Համշեն արտագաղթած հայ ղեկավարների՝ Ամատունյաց նախարարական տնից սերվելու հանգամանքը, հանգում է այն եզրակացության, որ արտագաղթած բնակչության ճնշող մեծամասնությունը դուրս է եկել Արարատյան նահանգի Արագածոտն և Կոտայք գավառներից³³: Մենք համաձայն չենք այդ եզրակացությանը, քանի որ հիշյալ գավառների բարբառներին հատուկ չեն Համշենի բարբառի քերականական հատկանիշները, այդ թվում նաև՝ Ե-շ հնչյունափոխությունը: Լ. հաշիկյանը նաև այն կարծիքն է հայտնել, որ ղրիմահայությունը սերվել է համշենահայերից: Ղրիմի և Համշենի բարբառների քերականական-հնչյունափոխական հատկանիշները թույլ են տալիս նման եզրակացության հանգելու:

Սեղ համար համոզիչ կովան է թվում լեզվական կապի ոչ ենթադրյալ առկայությունը համշենահայ և նրա անմիջական նախորդը հանդիսացող Մարքի տարածքի բարբառների միջև: VIII դարում այդ տարածքից գաղթել են առավելապես շինական ընտանիքներ, որոնք և պահել են իրենց ավանդույթներն ու լեզուն: Կարևոր հանգամանք է նաև, որ նրանք համեմատաբար խաղաղ են ապրել և ասիմիլյացիայի չեն ենթարկվել մինչև XVI դ. (հին ղրիմահայերը դժգոհաբար են դարձել XVI դարում), վարել են ինքնուրույն տնտեսական կյանք: Հետագա շրջանում իսկ արևմտահայ գրական լեզուն քիչ ազդեցություն է գործել համշենահայության լեզվի քերականական նախնական կառուցվածքի ու բառային կազմի վրա:

Համշենի բարբառում պահպանված բառերը ևս կարող են ապացուցել համշենահայերի բնակության ճիշտ վայրը: Նման օրինակ կարող է հանդիսանալ առագ>առաս բառը, որը նշանակում է «սելավ», «մեծ հեղեղ»: «Այս

31 Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 132—133:

32 Հր. Ահաոյան, Հայերեն արձատական բառարան, հ. 3, էջ 279:

33 Տե՛ս «Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, էջ 9, 22:

բառը մեր Արաքս գետի անունից է, սակայն ոչ թե հին հայկական Նրասխ (պահված Մեզրիում Արասխ և վրացերեն Ռասխի ձևերով), այլ պարսկական արաղ ձևով: Այս բառը համընդուն հին բնակավայրի և գաղթականության վերջին գեղեցիկ հիշատակն է, որ շարունակում է իր գոյությունը այսօր էլ կովկասյան նոր գաղթավայրում, բայց առանց գիտակցվելու³⁴,— գրում է Հ. Աճառյանը:

Ղրիմի հայերը, հետևաբար և նրանց հետնորդները՝ Նոր Նախիջևանի հայերը, գաղթել են ինչպես Համշենից, այնպես էլ Արևմտյան Հայաստանի այլ վայրերից: Զալալիների շարժման առաջին շրջանը՝ 1598—1608 թթ., ընդգրկել է Փոքր Ասիան և Արևմտյան Հայաստանը, որտեղից և հիմնականում զանգվածաբար գաղթել են հայերը ու համալրել Ղրիմի գաղութի ազգաբնակչության կազմը: Շարժման մեկ այլ շրջանը՝ 1622—1628 թթ., ընդգրկում է էրզրումի (Կարին) տարածքը (Արևմտյան Հայաստան), հարկադրական գաղթի պատճառ դառնալով արևմտահայության համար³⁵:

Այսպիսով, ինչպես համշենահայերը, այնպես էլ Նոր Նախիջևանի հայերը Մեծ Հայքի վաղնջական շրջանի տեղաբնիկներն են եղել և ենթարկվել են տեղահանության՝ իրենց հետ տանելով սովորույթները, բարքերն ու լեզուն: Թե՛ Համշենի և թե՛ Նոր Նախիջևանի բարբառները միատարր չեն: Նրանք ներառում են նախկին մի շարք գավառների խոսվածքները, բառային շերտերը, հասկացությունները, բաղաձայնական համակարգերը, հնչյունափոխության օրինաչափությունները, որոնք հասնում են մինչմեսրոպյան լեզվի շրջանները: Դրա արտահայտություններից մեկը մեզ հետաքրքրող է-ի հնչյունափոխությունն է դ-ից ու ք-ից առաջ, Համշենի ու Նոր Նախիջևանի բարբառներում՝ մաշա և մաշք ձևերում:

Կարևոր է պարզել նաև այն հարցը, թե ինչու Կորյունը Մաշառք է գործածում, իսկ հետագա մատենագիրները՝ առավելապես՝ Մեսոպոտամիա: Խոսելով Մաշտոցի՝ միայնակեցությունը թողնելու մասին, Ա. Մարտիրոսյանը իրավացիորեն նշում է, որ Մաշտոցը ոչ թե սովորական ճգնավոր էր, այլ ինչ-որ լիազորություններով օժտված անձնավորություն, որին դիմավորել է իշխանը³⁶: Ինչպես տեսնում ենք, նրա առաքելությունը հատուկ իմաստ էր ստանում. նա գերապատիվ այր, մաշա համարվելու շնորհ է ունեցել:

Մենք նման բացատրությունը հիմնավոր ենք համարում նաև այն առումով, որ Մաշտոցը, առավել քան այլ ոք, գիտեր իր առաքելության նպատակը. դա ամենամարդկային, ազգապահպան մեծագույն գործն էր, որ երբևէ կատարել էր որևէ մեկը հայ իրականության մեջ: Տառերի գյուտը իր քաղաքական, ազգային նպատակներն է ունեցել նաև: Մաշտոցը, որքան կրոնական, նույնքան էլ աշխարհիկ գործիչ է եղել, և մտղ>մաշա անունը նրա կրոնական սքեմի տակ շեշտում էր մարդկային մեծությունը:

Մի՞թե առավել տրամաբանական է չընդունել բուն հայկականը, այն էլ իմաստավորված սեփական ժողովրդի կողմից և գնալ դեպի օտարամուտ Մազդ, Մաժաճ, Մաժդաճ արմատները՝ հնարավոր բոլոր ենթադրություններով դրանք նորից վերափոխելու մաշա-ի կամ մաշք-ի: Մաշտոց բառը բուն հայկական ծագում ունի, և, կարծում ենք, այդ անունը ժողովրդականություն է վայելել Մեսրոպի քարոզչական գործունեության ու գյուտի ժամանակաշրջանում, արտահայտել է որոշակի վերաբերմունք նրա գործի նկատմամբ և հետագայում մոռացության է տրվում ոչ թե «իր անսովոր բնույթի պատճառով», այլ բառի ունակական ծագումի և առավելապես՝ աշխարհիկ իմաստի, որոնք եկեղեցու ու կրոնի ուշ շրջանի գործիչներին խիստ անհաճո կարող էին թվալ: Դրա բացատրությունը կարելի է փնտրել թեկուզ Վ դ. մատենագիրների երկերում: Այլ կերպ

34 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 13:

35 Տե՛ս Բ. Քուշնեբյան, Պատմութիւն գաղթականութեան խրիմու Հայոց, Վենետիկ, 1695:

36 Ա. Մարտիրոսյան, Մաշտոց (պատմա-քննական տեսություն), էջ 170:

ինչո՞ւ լ' բացատրել Մաշտոցի կենսագիր Կորյունի մոտ Մաշտոց անվան գերիշխությունը և Մ. Խորենացու ու նրա հետևորդների երկերում՝ Մեսրոպ-ի Որքան մեծանում է Մաշտոցի, որպես առաքյալի, համարվել, այնքան նրան կտրում են աշխարհիկ անունից՝ կատարյալ երկրորդ լուսավորիչ դարձնելու համար։ Այդ նպատակին ավելի համահունչ էր կրոնական լայն շրջաններում ճանաչում գտած Մեսրոպ-ը և ոչ թե առավել կնիքով Մաշտոց-ը։ Այս եզրահանգումը բխում է նաև այն տարակուսանքից ու անվստահությունից, որ տաժել է Կորյունը։ Քրայց արդ՝ նախ մի առաջաբան անենք, թե թույլատրելի՞ է արդյոք կատարյալ մարդկանց վարքի մասին գրել։ Ոչ թե մեր կողմից, մեր կարծիքով վիճաբանելով կճարտարախոսենք, այլ տրված օրինակներով պարզ կերպով կապացուցենք հակառակը³⁷։ Ակադեմիկոս էդ. Աղայանը այս միտքը մեկնում է հետևյալ կերպ. «Այս հատվածի մեջ կառարկյալ նշանակում է «մահացած, վախճանված», և հատվածի միտքն այն է, թե կարելի՞ է «Վարք» գրել նրանց մասին, ովքեր ոչ նահատակ են, ոչ սուրբ, ոչ մարգարե կամ առաքյալ։ Կորյունի այս առաջաբան-արդարացումը միանգամայն հասկանալի է։ Իր ժամանակին «Վարք» գրում էին նահատակների ու սրբերի մասին, մինչդեռ Մեսրոպը ոչ նահատակ էր, ոչ էլ սուրբ։ Թեև հետագայում Մեսրոպը դասվեց եկեղեցու սրբերի շարքը, բայց մանվանից անմիջապես հետո (ընդգծումը մերն է—Գ. Ս.) հավանաբար դեռևս չէր արժանացել այդ պատվին։ Ուստի Կորյունը հարկ է համարում արդարացնել իր մանավ մանացածի մասին «Վարք» գրելու իր հանդուժողությունը³⁸, հիստ տրամաբանական է, որ Մաշտոցի «մահվանից անմիջապես հետո», ինչպիսի «հանդուժողություն» էլ ունենար Կորյունը, կաշխատեք նրան, որ եկեղեցական աստիճան չի ունեցել, իբրև սոսկ կրոնավորի, սրբերի շարքը չդասելու իր արդարացումն ունենալ, որը, բնականաբար, կարտահայտվեր նաև «կառարկյալի», մահացածի, այն էլ իր մահով մահացածի, աշխարհիկ անվան պահպանմամբ։

Այս միտքը թերևս ոչ ուղղակիորեն, բայց ներքին համոզականությամբ հավաստում է նաև Ա. Տեր-Ստեփանյանի այն կարևոր դիտողությունը, որ մինչև հայերեն այբուբենի ստեղծումը եկեղեցիներում արարողությունը կատարվում էր ասորերեն և հունարեն, իսկ ասորի հոգևորականությունը հովնավորվում էր պարսից արքունիքի կողմից։ Մերի ստեղծումը և հայերեն լեզվով քարոզելը մեծ չափով հեղինակագրվել էր նրանց (ասորի հոգևորականներին—Գ. Ս.), բայց և իրենց նախկին իրավունքների համար պայքարի հանել։ Եվ քանի որ նրանց աղեղնությունը մեծ էր, Կորյունն էլ ըստ երևույթին ցանկացել է կանխել անխուսափելի հարձակումները և գրել այդ առաջաբանը³⁹—գրում է Ա. Տեր-Ստեփանյանը։ Միանգամայն համամիտ լինելով հեղինակի հետ, կուզենայինք Կորյունի այդ ծայրահեղ գգուշավորությունը տարածել նաև Մաշտոցի անվան գործածության խնդրի վրա։ Սրբի լուսապսակը գրեթե Մաշտոցի ժամանակակից այլազգի կրոնավորների կողմից հարձակումների առիթ կարող էր դառնալ։ Կորյունի մի քանի վկայությունները խոսում են այն մասին, որ Մաշտոցի անձը, նրա գործունեությունը «Վարքի» հեղինակին ծանոթ են եղել ոչ միջնորդավորված կերպով։ Նա եղել է Մաշտոցի մասնավոր աշակերտը, աշակերտների մեջ՝ կրտսերագույնը, որն ականատես է եղել իր պատմածին, ընթերակա է եղել Մաշտոցի և Սահակի գործերին և նրանց արբանյակն ըստ ավետարանական հրամանների⁴⁰։ Նա Մաշտոցի մասին ամեն ինչ չի շարադրել, նյութերի ընտրության մեծ հնարավորություն է ունեցել՝ «այլ շատը թողնելով և նշանավոր գիտականից քաղելով» այս համառոտը գրեցինք, որը ոչ միայն մեզ, այլև այս մատյանը կարդացողներին հայտնի է⁴¹։ «Այս մատյանը կարդացողները»

37 Կորյուն, Վարք Մաշտոցի, Բ։

38 «Շայ մշակութի նշանավոր գործիչներ, 5—8-րդ դդ.», Երևան, 1976, էջ 16։

39 Տե՛ս նույն տեղում, էջ 21։

40 Կորյուն, Վարք Մաշտոցի, ԻԸ։

41 Տե՛ս նույն տեղում։

ժամանակակիցներն են, առավելապես՝ ընդդիմախոսները, այլապես Կորյունը կարիք էր ունենա, «պատասպարվելու... առաքելականով», այսինքն՝ առաքելական գործունեությամբ, քրիստոնեական քարոզներում: Մ. Աբեղյանը «պատասպարվելը» բացատրում է «ապավինել, ապաստանել, պաշտպանվել»⁴², ինչից կարող էր զգուշանալ, եթե ոչ վախենալ «չդիմանալ» նրանց (Սահակի և Մաշտոցի) «բոլոր արածները գրելուն»: Պարզ ասված է, որ դրանից անախորժություններ կարող էին ծագել:

Հեղինակը, սրբերի «բազմախուռն վաստակները» թողած, պատմում է միայն «կարևորագույն հանգամանքները»: Սրբի գործունեության պատմության մեջ դժվար թե Մաշտոցի աշխարհիկ անունը և նրա մեկնությունը կարեւոր դեր խաղային և անախորժություն չպատճառեին թե՛ գործչի հիշատակին և թե՛ նրա «Վարքի» հեղինակին: Փոքր-ինչ անսպասելի է, որ առաջաբանի բուն արդարացու չհետ, հեղինակն անցնում է էպիկական սահուն նկարագրի՝ «Մաշթոց էր անունն այն մարդու... Նա Տարոն գավառից էր, Հացեկաց դուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին»: Մ. Աբեղյանը կասկածի տակ է առնում երանելի բառը, ճիշտ համարելով երեւելի այլընթերցումը⁴³, «Երանելին» արդեն իսկ ի ծնե կրոնավորի ընտանեկան ավանդ ու սրբի նախադրյալներ է ստեղծում, սակայն չմոռանանք, որ դրանից մի քանի տող վերևում Կորյունը խոսում է սոսկ արդար մարդու, այսինքն՝ Մաշտոցի մասին:

Այսպիսով, թե՛ առաջաբանում և թե՛ բուն պատմության առաջին տողերում առավել հիշատակվողը մարդն է (այլ), ոչ թե կրոնավորը, երանելին: Սա արդյո՞ք նրա անվան մեկնության բանալին չի պարունակում:

Մեր առջև դրված մյուս խնդիրը նկատված լեզվական օրենքի գործածության ժամանակաշրջանի, արտահայտության հնագույն դեպքերի, մի խոսքով՝ ամենահին բառաշերտերին հասնելն էր: Հայտնի է, որ Դարեհ Ա-ի Բեհիստունի սեպագիր արձանագրությունում (մ. թ. ա. VI դ.) ARMINA իրանական ձևի կողքին էլամերեն արձանագրված է URAŠTU անունը, որ URARTU-ի տարբերակն է: Թեև URAŠTU չէր աքաղերենն է, այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ հայերենն էլ իր հնչյունափոխությամբ, իրեն հատուկ քերականական օրենքներով ունեցել է հնչյունափոխված Ուրաշտու ձևը: Այս հասկածն ավելի խորացավ, երբ համադրեցինք Ուրաշտու և Ռշտունի տեղանունները: Փորձենք մեզ ծանոթ հնչյունափոխության օրենքի վրա հենվելով, հիմնավորել այս միտքը: Ուրաշտու-ն սերվում է Արաշտա-ից, որը մատենագիտության մեջ գործածվում է նաև որպես Այրաշտա: Այս անունից կարող էր առաջանալ Ուրաշտու ձևը, որից և Բ-ի հնչյունափոխության օրենքով՝ Ուրաշտու-ն: Ռշտունի-ը ֆավստոս Բուղանդի մոտ գործածվում է Ըոշտուն (իբ): Նմանությունը ակնհայտ է՝ Ուրաշտու > Ըոշտու (նախաբաղաձայնական դիրքերում գործել է Բ-ի, Ն-ի անցման կամ Ն-ի ու Բ-ի շփոթության օրենքը)⁴⁴, Դիմելով ժամանակագրական շերտավորման (ստրատիֆիկացիայի) տվյալ վիճակում բացահայտված հին երևույթի և նրա հետ համընկնող պատմական փաստի քննմանը, որպես հիմնավոր կռվան հարկ է նշել այն ճշմարտությունը, որ Ռշտունիքը ընկած է Ուրարտուի մայրաքաղաք Վան-Տուշպայի գավառի տարածքում⁴⁵:

Կարելի է ենթադրել, որ Մարաց կողմերի հետագա բնակիչները անմիջական հաջորդներն են այն էթնոսի, որի լեզվում գործում էր Բ-ի հնչյունափոխությունը:

⁴² Նույն տեղում, էջ 5:

⁴³ Նույն տեղում, Գ, ծանոթագրություն:

⁴⁴ Տե՛ս Գ. Բ. Ժապյան, Очерки по истории дописанного периода армянского языка, Ереван, 1967, с. 230 և նրա չի՝ Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, էջ 48:

⁴⁵ Մանոթանալով այս ստուգաբանությանը, ակադեմիկոս Ա. Տ. Երեմյանը բանավոր խոսքում նշեց, որ Բուղանդի Ըոշտունի-ի բանալին գտնված է:

Կարո՞ղ ենք արդյոք Ուրաշտու ձևում հնչյունափոխությունը ընդունել որպես հայկական հնչյունաքերականական հատկանիշ և ենթադրել, որ այն առկա է ևղև գրերի գյուտից մոտավորապես մեկ հազարամյակ առաջ: Միանշանակ պատասխան տալ դժվար է, սակայն կարելի է ենթադրել, որ Դարեհ Ա-ի կողմից միայն հինգերորդ հարձակումով զրավված երկրի անունը ճիշտ արձանագրված կլինի Իրանից Միջագետք տանող ճանապարհի վրա գտնվող Բեհիստունի արձանագրությունում: Անհավանական չէ, որ Դարեհ Ա-ն Ուրարտուի արեւելյան սահմանների բնակիչների արտասանությանն է տուրք տվել, որոնց հետ նրա զորքը բավականաչափ շփվել էր մինչև ողջ երկրի զրավումն ու արձանագրության փորագրումը: Մեզ այս հարցում օգնում է Ռշտուեիֆ անունը: Կարելի է ենթադրել, որ Ե-շ հնչյունափոխությունը Ուրաշտու բառաձևում հայկական է եղել, ինչպես նաև՝ երկրորդ հնչյունափոխությունը, որը տվել է Ռշտուեիֆ ձևը: Ուրաշտու-ն նույն Ռշտուեիֆն է, Ռշտուեիֆը՝ ավելի հարազատ ժողովրդին ու նրա լեզվին, թերևս դրա ապացույցը Ռուսա թագավորի անունն էր, որը, հավանաբար, եղել է Ռուշա (Ըռուշա) և նախորդել է Ռշտուեիֆին: Ռուսա (Ռուշա) գործածությունը կարող է ժամանակային պարզություն մըտցրնել մեզ հետաքրքրող խնդրի մեջ: Ռուսա Ա-ն (Ռուշա)՝ Մարդուր թագավորի որդին, Ուրարտուում թագավորել է մ. թ. ա. մոտ 735—714 թթ.: Կարծում ենք, հնչյունափոխության այս օրենքը հայերենում գործել է դեռևս մ. թ. ա. VIII դարում: Հնագույն շրջաններում գործածված Ռշտուեիֆը, բնականաբար, գրերի գյուտից հետո պիտի հիշատակվեր առաջին հեղինակների կողմից՝ V դարում:

Այսպիսով, եթե Ուրաշտու անվան հնչյունաքերականական հատկանիշներն արտահայտենք մինչմեսրոպյան լեզվի պատմական զարգացման որոշակի մակարդակներով, ապա կունենաք հետևյալ աստիճանները՝ Այրաւստ > Արաւստ > Արաւաղ > Ուրաւաւ > Ուրաւդու > Ուրաշտու > Ռշտուեիֆ: Ինչպես տեսանք, Ե-շ հնչյունափոխությունը առկա է մ. թ. ա. VIII—VI դդ. սկսած:

Ոչ մի հիմք չունենք կասկածելու, որ նույն ժամանակաշրջանում այս օրենքին կարող էր ենթարկվել նաև հայերենի բառային կազմի ամենակենսունակ բառերից մեկը՝ մարդ-ը: Այն հետագայում կարող էր ընդունել հնդեվրոպական -ag ածանցը՝ դրա մեջ որոշակի իմաստ դնելով, որը պիտի խորացներ մարդ իմաստն ու մարդկային արժեքը: Այն հանգամանքը, որ հիշյալ հնչյունափոխությունը կենսունակ է Պոլսի միջբարբառում կամ բարբառների հյուսիս-արևմտյան միջնախմբում, սակայն նրա գործածության ակունքները հայտնաբերվել են Արևելյան Հայաստանի Վանի շրջանի և Մարաց կողմերի հայ բարբառներում, խոսում է նախկինում նրա գործելու առավել ընդհանրական բնույթի ու նշանակության մասին՝ Բզնունյաց ծովից հյուսիս-արևելք ընկած տարածքից Փոքր Հայքով մինչև Պոնտական ծովի սփերը:

Դժվար է պարզել արդի Վանի բարբառի համակողմանի կապերը Ռշտուեիֆը տարածքի լեզվի (բարբառի) հետ, սակայն պարզվում է, որ և՛ նախագրային շրջանում և՛ արդի հայերենում Վանի, Համշենի, Տրապիզոնի, Նոր Նախիջևանի բարբառներին հատուկ են Ե-ի քմայնացումը և դրա հետ կապվող փոփոխությունները՝ Ե-շ⁴⁶:

Քանի որ մեզ հետաքրքրող հնչյունափոխության կրողները Համշենի, Տրապիզոնի, Նոր Նախիջևանի բարբառներն են, ապա պետք է նշել, որ դրանց բառային շերտերը իրենց մեջ թաքցնում են ոչ քիչ թվով չպարզված լեզվական իրողություններ, որոնք գուցեև պատասխան տան այն հարցերին, թե արդյո՞ք հայասերենը հայերենի անմիջական նախնին է⁴⁷ կամ արդյո՞ք ուրարտական փոխառությունները կատարվել են միայն արմենների լեզվից⁴⁸: Բացառվում

⁴⁶ Գ. Բ. Զահեկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 51, աղյուսակ 2:

⁴⁷ Գ. Բ. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, с. 64.

⁴⁸ Գ. Բ. Джаукян, Урартский и индоевропейские языки. Ереван, 1963, с. 133.

են արդյոք Փոքր Հայքի ու նրան հարող տարածքում բնակված հայասա ցեղերի ու Պոլսի միջբարբառը կրող մեր ժողովրդի էթնիկական, լեզվական աղերսները:

Կարելի է ենթադրել, որ մեր բարբառներն իրենց հնությամբ ու քերականական կուռ կառուցվածքով կարող են նոր լույս սփռել լեզվի և պատմության կարևորագույն հարցերի վրա ու նոր հետևությունների հանգեցնել: Հր. Աճառյանը, խոսելով ստուգաբանությունների մասին, նշում է, որ «...պետք է մի բաժին էլ հատկացնել նրանց (բառերին—Գ. Ս.), որոնք անստույգ են և տատամսոտ, բայց կարող են թերևս հետո մի նոր օրենքի զորությամբ վավերական դառնալ»⁴⁹:

Մեր պատմական տեղանունները, մշակույթի, պետական գործիչների անունները՝ վաղնջական շրջաններում գործող հայերենի քերականական օրենքներով ստուգաբանելու բացառիկ հնարավորությունը՝ ընձեռված մեր կենդանի բարբառների կողմից, վավերացնում է Հայկական լեռնաշխարհում հայերի գոյությունը ոչ միայն մինչքրիստոնեական շրջանում, այլև մեկ հաղարամյակ դրանից առաջ:

К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ ИМЕНИ МАШТОЦА

ГЕВОРК СИМОНЯН

Резюме

В истории культуры Армении определенное место занимает Маштоц—создатель армянского алфавита. Изучению его творчества посвящено множество трудов, в которых рассмотрены также вопросы этимологии его имени. Большинство авторов считают, что оно образовано от персидского корня *мазд*, от которого происходят имена *Маздак*, *Арамзд*, *Мажан*. Некоторые исследователи связывают происхождение этого имени с корнем *машт*. Однако это имя является исконно армянским. В некоторых современных диалектах—трапезундском, новонахичеванском (крымском) и хамшенских—в слове *мард* происходит чередование звуков р-ш. Исследование закономерностей чередования г перед звуками d, t приводит к выводу, что в дописьменном периоде армянского языка это чередование было широко распространено. В VIII в. до н. э. рядом с именем Урарту встречается также и форма *URAŠTU*. Имя *RŠTUNJK* является разновидностью того же слова */URAŠTU>RŠTU/*. Они локализируются в пределах одной и той же области—столицы Урарту Ван-Тушпа. Этимология данных и других имен и слов доказывает, что чередование г-š—явление древнее, и оно распространяется также на слово *мард*, а-оц является индоевропейским суффиксом, характерным для древнеармянского языка.

⁴⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 15: